




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Հ Ր Դ Ի

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՅԵՐԿՐԱՅԻՆ ԳՐԱՍԵՆՑԱԿ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

Բ Ի Դ Ի

ԿՈՆՏՐԱԿՏԱՑԻԱՅԻ

ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

38

բ-90

Հ Ա Կ Կ Ն Ի Գ Ա

1 9 3 1

66 APR 2010

CA 32-K
246

38

1-90

«Ռ Ռ Ռ Ռ»

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՅԵՐԿՐԱՅԻՆ ԳՐԱՍԵՆՑԱԿ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

Բ Ր Դ Ի

ԿՈՆՏՐԱԿՏԱՑԻԱՅԻ

ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

42-84803

ՀԱԿԿՆԻԳԱ

1 9 3 1

06 MAR 2013



60873-67

ԽՍՀՄ, Մ. Մ. Մյասնիկյանի անվան հրատարակչ. «Զարյա վաստակ»-ի

Գառվեր 885

Գլավիտ 326

Ֆրաժ 3000

54.845

ԲՐԴԻ ԿՈՆՏՐԱԿՏԱՑԻԱՅԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Կոնտրակտացիան մի պայմանագիր է, վոր գյուղացիական տնտեսությունը և գյուղատնտեսական կոոպերացիան կապում են միմյանց հետ, և հենց այդ յերկու պայմանավորվող կողմերը պարտավորվում են կատարել վորոշ պայմաններ:

Կոնտրակտացիան նորություն չէ: Դեռևս հեղափոխությունից առաջ գործարանատերերն իրենց գործարանները հում նյութով ապահովելու նպատակով, պայմանավորվում էին գյուղացիների հետ, վաղորոք, վորպեսզի սրանք իրենց ապագա բերքը հանձնեն նրանց:

Գործարանատերերն իրենց գործունեությունը գյուղացիությանը կեղեքելու և խաբելու վրա էին հիմնում: Նրանք յերբեք չէին մտածում վնչ գյուղատնտեսության, վնչ էլ գյուղացու ընտանիքի բարեկեցության մասին: Իրենց հարկավոր հում նյութը ձեռք բերելու համար, նրանք հաճախ պայմանավորվում էին գյուղի վերին շերտի, այսինքն՝ կուլակության հետ:

Կուլակությունը թեև չքավոր ու միջակ տնտեսություններին տալիս էր արտադրական աննշան նպաստներ, նրանց նեղն ընկած ժամանակ փոխառություն տալով, բայց այս բոլորի դիմաց, նա սլոկում

եր նրանցից ահագին վաշխառուական տոկոսները: Իբրև գրավ վերցնելով գյուղացիներից ապագա բերքը, բավական է, վոր չնչին գնով եր ձեռք ձգում, խաբուս ել նրանց՝ կշռելիս, չափելիս և հաշիվ տալիս: Այս ձևով կուլակները բազմաթիվ չքավոր ու միջակ տնտեսություններ են ավերել, և անչափ գյուղացիներ նրանց ձեռին ստրուկ դարձած՝ կիսաքաղցած ու չարքաշ կյանք եյին վարում:

Բոլորովին տարբեր բան և խորհրդային կոնսուրակտացիան: Նրա նպատակն և բարձրացնել և ամրացնել չքավոր ու միակ տնտեսությունները: Նա այդ իրագործում է մի շարք արտադրական միջոցառումներով, բարելավելով վոշխարներին կերակրելու և նրանց խնամելու պայմանները, ապահովելով վոշխարաբուծական տնտեսությունները, զոոտեխնիկների և անասնաբույժների հարկավոր կազմով, ոգնելով նրանց տարերային աղետները ժամանակ և այլն:

Կոնսուրակտացիան միլիոնավոր չքավոր ու միջակ տնտեսությունների կոոպերացմանն է նպաստում. նա ոգնում է նրանց արտադրական միջոցների հանրայնացմանը, այդ տնտեսությունների կոլլեկտիվացմանը, վորպեսզի զարգանա ու վերաշինվի գյուղատնտեսությունը խորհրդային յերկրում, այսինքն հնարավորություն ստեղծվի՝ նորագույն մեթոդներով ու բարձր տեխնիկական միջոցներով տնտեսությունն առաջ տանելու համար:

Խորհրդային կոնսուրակտացիայի կարևոր նպատակներից մեկն էլ այն է, վոր մեր սոցիալիստական արդյունաբերությունն ապահովված լինի հարկավոր քանակությամբ և լավորակ հում նյութով:

Խորհրդային Միության մեջ կառուցվում են նորանոր գործարաններ, վորտեղ պատրաստվում են գյուղատնտեսական մեքենաներ, տրակտորներ, իսկ գյուղատնտեսական արդյունքներ վերամշակող գործարանների համար արտադրում են հարկավոր սարքավորում: Գործարաններին հում նյութ և հարկավոր: Հենց կոնսուրակտացիան է այն միջոցներից մեկը, վորն ոգնում է խորհրդային արդյունաբերության պարագամանը, առաջուց ապահովելով՝ նրան հում նյութով: Խորհրդային կոնսուրակտացիան, վոր անց է կացվում պայմանագրերի միջոցով արդյունաբերության և գյուղատնտեսական կոոպերացիայի միջև, գյուղատնտեսությանը պատվիրում է լավ և հարկավոր քանակությամբ հում նյութ: Միևնույն ժամանակ, նա ինքը պարտավորվում է հասցնել գյուղին հարկավոր արդյունաբերական ապրանքներ: Ուրեմն կոնսուրակտացիան յերկու պայմանագրովոդ կողմերի համար հավասարապես ոգտակար է: Վերջապես կոնսուրակտացիան գյուղի և քաղաքի միջև սերտ կապ հաստատելու մի միջոց է, քանի վոր շուկայի առևտուրը վոխարինվում է գյուղի և քաղաքի միջև մթերքների կազմակերպված փոխանակությամբ:

Հասկանալի չէ, ինքնըստինքյան, վոր գյուղացին խիստ շահագրգռված է մեր արդյունաբերության պարագացումով, վորովհետև արդյունաբերությունը նրանից ստացած հում նյութը վերամշակելուց հետո, նորից վերադարձնում է գյուղին պատրաստ ապրանքի ձևով:

ԿՈՆՏՐԱԿՏԱՑԻԱՅԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Առեօնողիմատը մի վորոշում է կայացրել, վորտեղ կտրուկ կերպով ցույց է տրված, թե ուղքեր և ինչ պայմաններով պետք է միմյանց հետ պայման կապեն 1931 թվին հավաքվելիք բոլոր վերաբերմամբ:

Այդ վորոշման համաձայն, այս տարի յերկու տեսակ կոնտրակտացիա պետք է անցկացվի՝ կոնտրակտացիա ավանսով և առանց ավանսի:

Ավանսով է անվանվում այն կոնտրակտացիան, յերբ պայմանավորվող տնտեսութունը բուրդը դեռևս չհանձնած, ստանում է կազմակերպութունից կանխավճար առանց տոկոսի, փողով կամ ապրանքով, տնտեսության կարիքների համեմատ:

Ավանսով կոնտրակտացիան անց է կացվում գլխավորապես այն դայոններում, վորտեղ վոչխարաբուծութունը շատ է զարգացած:

Կոնտրակտացիան առանց ավանսի անցկացնելու դեպքում, գյուղատնտեսութունը վերցնում է նույն պարտավորութունները, ինչպես ավանսով կոնտրակտացիայի ժամանակ, ոգտվելով միաժամանակ այն բոլոր առավելութուններից, վոր տրվում են ավանսով կոնտրակտացիայի դեպքում:

Միմիայն տարբերութունն այն է, վոր անավանս կոնտրակտացիայի ժամանակ վոչ փողով և վոչ էլ ապրանքով կանխավճար չի տրվում տնտեսութուններին:

Առանց ավանսի կոնտրակտացիան անց է կացվում այն դայոններում, վորտեղ վոչխարաբուծութունը յերկրորդական դեր է խաղում և ոժանդակիչ

ճյուղ է կազմում տնտեսության մեջ: Այդ պատճառով տված կանխավճարի գումարը, փոքր լինելով, մի առանձին նշանակութուն չի կարող ունենալ տնտեսության համար:

Պետք է նկատի ունենալ նաև այն, վոր գյուղատնտեսական կոոպերացիայի կողմից պայմանագրով տրվող անասնաբուժական և զոոտեխնիկական ոգնությունը կարևոր նշանակութուն ունի տնտեսության համար:

Գյուղացիական կոոպերացիան իր հետ պայմանավորվող տնտեսութուններին զոոտեխնիկական և անասնաբուժական ոգնությունը ձրի յե հասցնում: Նա այդ անում է վոչ թե միայն տնտեսությունների պահանջով, այլ և իր սեփական նախաձեռնությամբ, միևնույն ժամանակ, վերահսկելով իր ստանձնած մի շարք զոոտեխնիկական միջոցառումների հիման վրա:

ՈՒՄ ՀԵՏ Ե ԿԱՊԼՈՒՄ ԿՈՆՏՐԱԿՏԱՑԻԱՆ

Կոնտրակտացիան (ավանսով և առանց ավանսի) անց է կացվում ամենից առաջ կոլխոզներում, հողային և ավանային ընկերություններում, չքավոր և միջակ գյուղացիների միություններում, և այս բոլորից հետո միայն՝ տնտեսական չքավոր ու միջակ տնտեսություններում:

Նուրակների հետ կոնտրակտացիան վոչ մի պայմանագիր չի կապվում:

Ինտրիկ, խորհրդային իշխանությունն առավելապես շահագործված է գյուղատնտեսության զարգացումով, հատկապես չքավոր և միջակ տնտեսություն-

ների բարձրացումով և ամրացումով, և վոչ թե կուլակներին տնտեսութեամբ:

Կոնտրակտացիան, ամեն կերպ ոգնելով գյուղի չքավոր ու միջակ մասսային, նրա տնտեսութեան բարձրացման գործում, ավելացնելու համար նրա բերքի ապրանքային ավելցուկը և այլն, կուլակային տարրերի տնտեսական բոլոր հնարավորութեաններն սահմանափակում է խիստ կերպով, պահանջելով նրանցից գյուղխորհուրդների միջոցով հանձնել իրենց բրդի ընդհանուր յեւքի 90 տոկոսը պետական կամ գյուղատնտեսական կոոպերացիայի մթերման կետերին:

Այստեղից պարզ յերևում է, վոր կոնտրակտացիան խորհրդային իշխանութեան կողմից գյուղում դասակարգային քաղաքականութեան անցկացնելու ձևերից մեկն է, վորը համատարած կոլեկտիվացման հիման վրա կուլակութեան, իբրև դասակարգի, փերացման համար մղվող պայքարն է: Հենց այս է պատճառը, վոր կուլակութեանը ղինվում է կոնտրակտացիայի դեմ այնքան կատաղի կերպով և տարածում է նրա մասին ամենամահեթեթ լուրեր:

Վերևում մենք արդեն ցույց տվինք, թե ում հետ պետք է կապվեն կոնտրակտային պայմանագրերը: Սակայն վերոհիշյալ տնտեսութեաններից յուրաքանչյուրին տարբեր ձևով են ոգնում: Կոլխոզներին և մյուս չքավոր ու միջակ տնտեսութեանների միութեաններին փողով կամ ապրանքով կանխավճարն ավելի յե տրվում, քան անհատականներին: Ազնվացեղ վոչխարի փարախներ, ամենալավ արոտատեղեր և այլն առաջին հերթին տրվում են հանրայնացրած տնտեսութեաններին:

Իհարկե, առանց նպատակի չե, վոր հանրայնացրած տնտեսութեաններին են տրվում այս առավելութեանները և վոչ թե անհատականներին:

Վոչխարապահութեան բարելավումը, չքավոր ու միջակ տնտեսութեանների բարեկեցութեան բարձրացումը և առհասարակ գյուղատնտեսութեան վերակազմութեանը հնարավոր է միայն տնտեսավարութեան մեթոդների բարելավումով, սովխոզային և կոլխոզային շինարարութեամբ: Հայանի յե, վոր մինչև անգամ միջակ անհատական տնտեսութեան մեջ ամեն մի բարելավում վորոշ սահմանից անցնել չի կարող, վորովհետև նա այդ բանի համար բավականաչափ ուժեղ չէ, կամ նրան ձեռնառն չէ: Առավել ևս խոսք չի կարող լինել կոլխոզից դուրս մնացող չքավոր տնտեսութեան մասին: Որինակ՝ չքավոր կամ միջակ տնտեսութեանները, առանձին վերցրած, յերբեք չեն կարող իրենց հոտն աղնվացնել ցեղային վոչխարների միջոցով, նրանք չեն կարող նրբագեղմ վոչխարներ գնել իրենց վոչխարների հետ խառնելու նպատակով. նրանք չեն կարող պատրաստել նաև ձմեռվա ուժեղ կամ կոշտ կեր վոչխարների համար, կամ վարձել զոտեխնիկներ, անասնաբուժիկ և այլն:

Բոլորովին ուրիշ են պայմանները կոլխոզում, վորտեղ կենտրոնացած են հանրայնացված արտադրական միջոցները և աշխատող ուժերը, վորոնց շնորհիվ հնարավոր են ամեն տեսակ բարելավումներ: Այս դեպքում վոչ միայն բարդ արտադրական միջոցառումները հնարավոր և ձեռնառն յեն, այլ մինչև անգամ ամենահասարակ ձեռք առնված արտադրական միջոցառումներն անհամեմատ ավելի մեծ աջողութեաններ

են ունենում կոլխոզում, քան անհատական տնտեսութեան մեջ:

Հասկանալի յե, թե ինչու պետութեանը, լինելով շահագրգռված գյուղատնտեսութեան վերակառնութեամբ, ամեն տարի կոնտրակտացիայի վրա ծախսում և հարյուրավոր միլիոն ռուբլիներ: Հենց այս և պատճառը, վոր նա առավելութեաններ և տալիս և մեծ ոգնութեան և հասցնում հատկապես այն տեսակ տնտեսութեաններին, վորոնք ամենից շատ հնարավորութեան ունեն ոգտագործելու կոնտրակտացիայի բոլոր առավելութեանները:

ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎՈՂ ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒ- ԹՅՈՒՆՆԵՐԸ

Ուրեմն կոնտրակտացիան մի պայմանագիր և՛ կապված կամավոր սկզբունքներով և յերկու պայմանավորվող կողմերի համար հավասարապես ոգտակար:

Այդ պայմանագրի ուժով պայմանավորվող տնտեսութեանը—կոլխոզը, անհատական գյուղացիական, չքավոր ու միջակ տնտեսութեանը կամ նրանց միութեանը պարտավորվում են կազմակերպության (գյուղատնտեսական կոոպերացիային) վորոշած ժամկետին հանձնել վորոշ քանակութեամբ զարնան և աշնան վոչխարի և զառան բուրդ: Յեւ վորպեսզի պայմանավորվող տնտեսութեանն իր վրա վերցրած պարտավորութեանը կատարելու հնարավորութեան ունենա՝ նա միաժամանակ պարտավորվում և:

1. Անխախտ պահել մինչև պայմանագրի ժամանակամիջոցի լրանալն իր հոտի վոչխարների այն թիվը, վորը յեղել և պայման գրելու ժամանակ:

2. Անցկացնել զոտեխնիքական և անասնաբուժական հետևյալ միջոցառումները, վորոնք բրդի քանակութեանը բարձրացնում և վորակը լավացնում են.

ա) Ուշադրութեամբ հսկել վոչխարների առողջութեան վրա, իսկ նրանց հիվանդանալու ժամանակ, առանց հետաձգելու, իմաց տալ անասնաբուժին:

բ) Առանձին ուշադրութեան դարձնել վարակիչ հիվանդութեանների դեմ գործադրվող նախազգուշական միջոցների վրա, գլխավորապես ծաղկի, քոսի և սիրիրական ախտի դեպքում: Այս հիվանդութեաններից մեկով վարակված անասուններին պետք և անմիջապես հեռացնել հոտից և իսկույն անասնաբույժ հրավիրել և նրա տված պատվերները ճշտութեամբ կատարել:

գ) Աշխատել լավացնել հոտի վորակը, ջոկելով ամենալավ խոյեր և մաքիներ: Առանձնապես ուշադրութեան դարձնել խոյերի ընտրութեան վրա, վորը պետք և կատարել զոտեխնիքի ցուցմունքով: Թույլ չտալ վատ խոյերին միավորվելու:

դ) Վորպեսզի վոչխարները չվարակվեն փորի ճիճուներով, հարկավոր և նրանց հետու պահել խոնավ և ճահճոտ արոտներէից, փոսերի մեջ կանգնած ջրերից, լճակներից: Ծներին չուտացնել գլխի պտտոցից սատկած վոչխարների գլուխները. տաբին յերկու անգամ դեղ տալ շներին փորի ճիճուների դեմ (անասնաբույժի ցուցմունքով):

ե) Նախապատրաստել ամբողջ ձմեռվա և ամբողջ հոտի համար կոշտ կեր (չոր խոտ) և ունենալ վորքան կարելի յե ուժեղ կեր՝ միավորման ժամանակ խոյերին տալու համար, ծննդաբերութեան ժամանակ՝ մաքիներին և քիչ հետո՝ դառներին համար:

զ) Ապահովել վոչխարները հարմար կացարանով,
ը) Կոշտաբուրդ մաքրներին ու խոյերին և առաջին գեներացիայի (սերունդի) մեծիս մաքրներին թույլ չտալ միավորվելու մեկ և կես տարուց առաջ. նույնպես մերինոսի մաքրներին, խոյերին և յերկրորդ գեներացիայից սկսած մեծիս մաքրներին՝ յերկու տարուց առաջ:

թ) Ամենալավ ազնվացեղ մաքրներին միավորումն ամենալավ ազնվացեղ խոյերի հետ կատարել ձեռքի ոգնությամբ:

ժ) Յերկարացած պճեղները կտրատել ժամանակին և խուզել բուրդն աչքերի շուրջը և վտաքերի վերայից:

ի) Պահել և արածացնել վոչխարներն ուրիշ անասուններից հետո և առանձին: Մաքրներին և խոյերին արածացնել զատ-զատ, խառնելով նրանց միավորման ժամանակ միայն:

լ) Ոգտվել արոտներից նպատակահարմար ձևով և բարեկամել նրանց (վոչնչացնելով կոճղերը և թփերը, փորելով առուներ, ցանելով խոտի սերմեր և այլն):

խ) Վոչխարը խուզելու և բուրդը տեղավորելու ժամանակ պետք է բրդի տեսակներն առանձնացնել, ջոկել և միևնույն հակի մեջ տեղավորել ըստ սեռի, պույնի, հասակի և ցեղի, հեռացնելով գեղմից բրդի տակնուցքը: Բուրդը պետք է պահել չոր տեղում:

Վերև հիշված արտադրական միջոցառումների իրագործումը չքավոր ու միջակ տնտեսություններից մեծ ույժ և միջոցներ չի պահանջում, մանավանդ միացյալ ույժերից: Նա միաժամանակ շատ մեծ ոգուտներ է տալիս, ինչպես բուրդն աճելի ստանալու

և լավացնելու, այնպես և հոտն ամբողջությամբ պահպանելու տեսակետից:

Բայց և այնպես պետք է աչքի առաջ ունենալ վոր վերոհիշյալ զոտտիսնիկական միջոցների ցանկը պետք է տվյալ ռայոնի պայմանների համեմատ ճշտվի, լրացվի և այնպես մտցվի պայմանագրի մեջ:

Կոնտրակտացիա անցկացնող կազմակերպությունները կորմից, համաձայն նույն պայմանագրի, պարտավոր են.

1. Պայմանագրովոյ տնտեսությանը տալ դրամական վարկ՝ պայմանավորված բրդի արժեքի ամեն մի ուրբու հանդեպ:

ա) Կոլխոզների և չքավոր ու միջակ տնտեսությունների միություններին—40 կոպեկ:

բ) Անհատական չքավոր կամ միջակ տնտեսություններին—30 կոպեկ, իսկ բրդի հանձնելու ժամանակ վճարել նրա ամբողջ արժեքը, հանելով տված վարկի գումարը, հաշվելով բուրդն այն գներով, վորոնք հաստատված կլինեն Առևտրականության կողմից 1931 թվի համար, բայց վոչ պակաս 1930 թվի գներից:

Որինակ՝ ա) Կոլխոզը, հողմիությունը, կամ չքավոր միջակ մի ուրիշ միություն պայմանավորվել և տալ 1000 կիլո (2500 ֆունտ) գարնան բուրդ 890 ուրբու արժողությամբ: Պայմանավորվելու ժամանակ, հիշյալ միությունը պետք է բրդի արժեքի ամեն մի ուրբու հանդեպ ստանա 40 կոպեկ, այսինքն 356 ուրբի, իսկ մնացած 534 ուրբին կստանա այն ժամանակ յեռու պայմանավորված բրդի ամբողջ արժեքը:

բ) Անհատական, չքավոր կամ միջակ տնտեսութիւնը պայմանավորվում է հանձնել 100 կիլո (250 ֆունտ) գարնան բուրդ 89 ու. արժողության: Պայման կապելիս նա կստանա վարկ ամեն մի ուրբա համար 30 կ., այսինքն 26 ու. 70 կ., իսկ մնացած 62 ու. 70 կ. կստանա բուրդը հանձնելու ժամանակ:

2. Կոնտրակտացիա անցկացնող կազմակերպութիւնը պայմանավորված ամեն մի կիլո բրդի համար տալիս է մեկ կիլո (2 է կես ֆունտ) ալյուր կամ ցորեն, իսկ կոնտրակտային պայմանը կնքելիս՝ տալիս է ամեն մի կիլո պայմանավորված բրդի համար կես կիլո ալյուր:

Որինակ՝ վոչխարապահ տնտեսութիւնը պայմանավորվեց տալ 100 կիլո գարնան բուրդ: Պայման կապելու ժամանակ տնտեսութիւնն ստանում է 50 կիլո ալյուր կամ ցորեն, իսկ մնացած 50 կիլոն նա ստանում է բուրդը հանձնելիս:

3. Բաց թողնել պայմանավորված տնտեսության վոչխարի հօտի համար հարկավոր չափով կեր:

4. Անասնաբուժական կամ զոոտեխնիկական ոգնութիւն հասցնել վոչխարապահ տնտեսության պահանջով կամ սեփական նախաձեռնութեամբ (ձրի), միևնույն ժամանակ մատակարարել նրան հարկավոր դեպքերում վոչխարները բժշկելու համար դեղեր:

ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎՈՂ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Բացի վերևում թված պարտավորութիւններից, հիմնարկութիւնները վոչխարաբուժական տնտեսու-

թիւններին տալիս են մի շարք արտոնութիւններ, փորոնք կայանում են հետեյալում.

ա) Այն դեպքում, յերբ բուրդը հանձնում են կոլխոզները, հողային ընկերութիւնները, կամ գյուղացիք իրենց ամբողջ գյուղով՝ խմբովին (կոլեկտիվ կերպով), նրանք ստանում են տված բրդի մթերման արժեքից 2 տոկոս ավելի:

բ) Վորողված ժամանակից առաջ բուրդ հանձնողներն ստանում են արժեքից մեկ տոկոս ավելի:

գ) Առանց ավանսի կոնտրակտացիայի կարգով բուրդ հանձնողներն ստանում են բրդի արժեքից 2 տոկոս ավելի:

Որինակներ՝ 1. Կոլխոզը, հողային ընկերութիւնը կամ գյուղը, հավաքելով իրենց մեջ մի պարտիա բուրդ, հանձնում են բուրդ մթերող կազմակերպութեանը միանվազ: Յեթե հանձնած բրդի արժեքը 500 ուրբլի յե, վերև հիշած արտոնութեան համաձայն, նրանք կստանան 2 տոկոս ավելի, կամ 10 ուրբլի, այսինքն 500 ուրբլու փոխարեն՝ 510 ուրբլի:

2. Պայմանի համաձայն, տնտեսութիւնը 89 ու. արժողութեամբ հունիսի 10-ին պետք է բուրդ հանձնէր, բայց հանձնեց մայիսի 3-ին: Այս դեպքում նա ստանում է 1 տոկոս ավելի, կամ 89 կոպեկ, այսինքն 89 ուրբլու փոխարեն՝ կստանա 89 ու. 89 կ.:

3. Տնտեսութիւնը պայմանավորվում է տալ 50 կիլո բուրդ, առանց ավանսի, այսինքն առանց վարկ ստանալու փողով, կամ ապրանքով: Այս բուրդն արժե 44 ու. 60 կ.: Բուրդը հանձնելիս կստանա 2 տոկոս ավելի—89 կ.: Ուրեմն նա, փոխանակ 44 ու. 50 կ.-ի, կստանա 45 ու. 39 կ.:

ԿՈՆՏՐԱԿՏԱՑԻՈՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԶԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՍԱՐ՝ ՏՈՒԳԱՆՔ

Խորհրդային իշխանությունը գյուղի միջակ ու չքավոր խավերին ահազին ոգնություն հասցնելով նրանց տնտեսությունները բարձրացնելու և ամրապնդելու համար, ի հարկե, իրավունք ունի նրանցից ևս պահանջելու, վորպեսզի նրանք ապրանքային ավելցուկը հանձնեն պետական կամ կոոպերատիվային մթերոգ կետերին:

Բայց և այնպես՝ հաճախ գործի ժամանակ հակառակն է պատահում: Այն տնտեսությունը, վորը կոնտրակտացիայով պայմանավորվել և իր բուրդը հանձնել կոոպերացիային, նեղ որերին ոգտվում և խորհրդային իշխանության աված ոգնությունից, նըրանից ստանում և գյուղատնտեսական կոոպերացիայի միջոցով ավանաներ, վոչխարների համար կեր և իր համար ալյուր, ինչպես նաև զոոտեխնիկական և անասնաբուժական ոգնություն: Վերջը նա, կարծես, այս բոլորը մոռանում և և իր բուրդը ծախում և մասնավորին և դրանով խանդարում և պետաբեռնության մատակարարման գործին: Ի հարկե, դեպի այդ տեսակ անբարեխիղճ կոնտրակտաներն ամբողջ խորհրդային զխտակից հասարակայնությունը պետք և անպայման բացասաբար վերաբերվի և նրանց վրա ներգործի հասարակական միջոցներով: Այդ տեսակ հափշտակիչները տեղ չպետք և ունենան խորհրդային գյուղում:

Կոնտրակտացումը անցկացնող կազմակերպության շահերն առահովելու նպատակով սահմանված և տուգանք այնպիսիներն հասար, մորոնք չեն կատա-

րում իրենց պարտավորությունները: Այդպիսի դեպքում պայմանագրի մեջ նախատեսված են հետևյալ տուգանքները.

ա) Կոլխոզները և չքավոր միջակ տնտեսությունների միությունները չհանձնած բրդի արժեքի 25 տոկոսն են վճարում իրեն տուգանք:

բ) Անհատ չքավոր և միջակ տնտեսությունները վճարում են չհանձնած բրդի արժեքի 50 տոկոսը:

Որինակներ. Կոլխոզը կամ չքավոր և միջակ տնտեսությունները պայմանավորվել են հանձնել 1000 կիլո բուրդ 890 ա. արժողությամբ: Մթերոգ կետին հանձնել են միայն 800 կիլո: Այս դեպքում կոնտրակտանտը վճարում և մթերոգին չհանձնած բրդի արժեքի 25 տոկոսը, կամ 200 կիլո պակաս տված, բրդի 178 ա. արժեքից վճարվում և 44 ա. 50 կ. տուգանք:

Անհատական չքավոր կամ միջակ տնտեսությունը պայմանավորվում և տալ 100 կիլո բուրդ, 89 ա. արժողությամբ, բայց հանձնում և 60 կիլո: Այս դեպքում պայմանավորվողը վճարում և մթերոգին չհանձնած բրդի արժեքի 50 տոկոսը, այսինքն 40 կիլո բրդի 35 ա. 60 կոպեկ արժեքից տալիս և տուգանք 17 ա. 80 կոպեկ:

Տնտեսությունն այն դեպքում և ազատվում առգանք վճարելուց, յերբ նա հնարավորություն չունի իր պարտավորությունը կատարելու բնական արհավիրքների պատճառով (վոչխարների կոտորած՝ հիվանդություններից, ձմեռվա սառնամանիքներից և այլն), վոր պետք և վավերացված լինի տեղական իշխանությունների կողմից:

ՔՈՒՐԴ ՀԱՆՁՆՈՂՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄՆ ԱՐԴՅՈՒՆԱՐԵՐԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐՈՎ

Մինչև վերջերս գյուղատնտեսական կոոպերացիան, կոնսերվատիվ պայմանագրերի համաձայն, ամեն մի կիլո հանձնած բրդի դեմ պարտավորվում էր, վորոշած նորմայով, պայմանավորված տնտեսություններին տալ դեֆիցիտային արդյունաբերական ապրանքներ (այսինքն արդյունաբերական այնպիսի ապրանքներ, վորոնք ներկայումս շուկայում շատ սակավ են): Այդ նորմաները հաստատվում են Առևտրակրթության կոդմից ապրանքափոխառության վորոշ տոկոսի համաձայն (այսինքն՝ ղնահատելով ամեն մի կիլո բուրդն ապրանքի վորոշ քանակությամբ): Պետք է ասել՝ փորձը ցույց տվեց, վոր այս ձևի ապրանքափոխառությունը, թե բրդի վերաբերյալ և թե մյուս գյուղատնտեսական մթերքների, վնչ ամեն տեղ և վնչ ել ամեն դեպքում կարողացավ արդարացնել իրեն և ծառայել նպատակին: Այս տեսակ ապրանքափոխառության անհարմարությունը կայանում էր նրանում, վոր բուրդ հանձնող տնտեսությունը կոոպերատիվում չէր կարողանում ընտրել իր ճաշակի և կամքի համաձայն վորեւ ապրանք և հարկադրված էր լինում վերցնել այնպիսի ապրանքներ, վորոնք նախատեսված էին պայմանագրով և նշանակված ու հատկացված էին միմիայն բուրդ մթերելու համար, մյուս կողմից չքավոր-միջակ տնտեսությունների տված բրդի ամբողջ արժեքի գումարը մեծ մասամբ այնքան չնչին էր լինում, վոր նրանք անկարող էին լինում իրենց բրդի դիմաց վերցնել այնպիսի ապրանքներ, ինչպես

որինակ՝ պատրաստի շորեղեն, կոշիկներ, բրդի գործիածքներ և այլն: Սրա պատճառն էլ այն է, վոր ամեն մի ապրանքի արժեքն, առանձին վերցրած, փոխանակության համար վորոշված նորմայից անհամեմատ ավելի բարձր է լինում:

Այս բոլորի շնորհիվ այնպիսի մի դրուժյուն էր ստեղծվում, վոր թեև մի կողմից կոոպերատիվներում ապրանքների մեծ պաշար էր հավաքվում, բայց մյուս կողմից գյուղերում զգացվում էր ապրանքի սով: Բացի այդ, յերկրի ֆինանսային տնտեսության վրա վերոհիշյալ գործը բացասական ազդեցություն էր գործում:

1930 թ. նոյեմբերի 5-ին վորոշվեց գյուղատնտեսական մթերքներ հանձնողներին նոր ձևով մատակարարել արդյունաբերական ապրանքներ: Վերացվում է բուրդին վերոհիշյալ անհարմարությունը, իսկ նոր վորոշման ելույթները կայանում է հետևյալում.

Արդյունաբերական բոլոր ապրանքները յերկու մասի յեն բաժանված. առաջին մասին պատկանում են բոլոր հազվագյուտ (դեֆիցիտային) ապրանքները՝ մանուֆակտուրան, պատրաստի շորերը և կոշիկները, սապոնը, թելը, գլխի փաթաթոցները և նորմայով շաքարը, իսկ յերկրորդ մասին պատկանում են մյուս բոլոր ապրանքները:

Յերկրորդ մասին պատկանող ապրանքները գյուղերում ծախվում են ազատ կերպով և տրբում են ամենքին ուղած չափով, առանց սահմանափակումների: Իսկ առաջին մասին պատկանող ապրանքները տրվում են առաջին հերթին բարեխիղճ կերպով պայմանը կատարող և գյուղատնտեսական մթերքները

լրիվ հանձնողներին: Ապրանքները տրվելու յեն վորոշված սպառողական նորմաների համաձայն:

Վորպեսզի կոոպերատիվները հնարավորութուն ունենան խստությամբ կատարելու այս դիրեկտիվները, կազմվում և ճշտապահ կոնտրակտավորների և գյուղատնտեսական մթերքները լրիվ հանձնողների ցուցակը: Այդ ցուցակները կազմում են գյուղխորհուրդները, կամ ամեն մի գյուղխորհուրդին կից յեղած ոժանդակիչ հանձնաժողովը, ուր մտնում են գյուղխորհուրդի, գյուղի չքավորության, միջակ խավերի, սպառողական և գյուղատնտեսական կոոպերացիայի ներկայացուցիչները: Այդ ցուցակները մեջ մտցվում են միայն այն տնտեսութունները, վորոնք խորհրդային յերկրի առաջ իրենց վերցրած պարտավորութունները կատարում են բարեխիղճ կերպով, այսինքն պայմանավորվում են հանձնել իրենց տնտեսութունների մեջ արտադրվող գյուղատնտեսական մթերքների ամբողջ ապրանքային ավելցուկը և մթերման ժամանակ լրիվին հանձնում են պետական կամ կոոպերատիվային մթերող կետերին:

Այն տնտեսութունը, վորը կոնտրակտային պայման չի կապել կամ չի հանձնել իր ապրանքային ամբողջ ավելցուկը, այլ հանձնել և մի մասը, կամ ամբողջովին ծախում և մասնավորներին, նա բոլորովին զրկվում և դեֆիցիտային ապրանքներ ստանալու իրավունքից: Բացի այդ, տնտեսության բերքի ապրանքային մասի քանակութունը (ավելցուկը) վորոշում և ինքը, գյուղխորհուրդը կամ ոժանդակիչ հանձնաժողովը: Անհրաժեշտ և շեշտել առանձնապես, վոր այս միջոցն անպայման արդարացի յե անբարեխիղճ

կոնտրակտանտների վերաբերմամբ: Յեթե գյուղացիական տնտեսութունն ուզում և ոգտվել այն բոլոր արտոնություններից, վոր նրան տրվում և խորհրդային իշխանության կողմից, և ուզում և ստանալ արդյունաբերական և իրեն հարկավոր ամեն տեսակ ապրանքներ, այն ևլ եժան կոոպերատիվային գներով, այն ժամանակ ինքն ևլ իր հերթին պետք և ընդունալի պետությանը, այսինքն ոգնի նրան, վորպեսզի նա կսրողանա արդյունաբերությանը (գործարաններին) հում նյութ հասցնել հարկավոր քանակությամբ և մատչելի գներով: Վերջիվերջո այս բոլորը չե, վոր ծառայում և նույն գյուղացիական տնտեսության սեփական շահերին այն պարզ պատճառով, վոր յեթե պետութունն ստիպված լինի բրդին վճարել արհեստականորեն ուռցրած գներ, այն ժամանակ դրա համեմատ ինքն ևլ բրդից պատրաստած ապրանքների գները պետք և բարձրացնի: Այս դեպքում, իհարկե, ամենից առաջ և ամենից շատ ֆուսս և հասնելու նույն գյուղացուն:

Ճշտությամբ հանձնողներին, բացի վերոհիշյալ ձևով արդյունաբերական ապրանքներ տալուց, գյուղատնտեսական վորպերացիան այս տարի պետք և տա նաև շինելներ, բրեզներտներ, թոկ և թաղիք, վորի նախատակն և վոչխարապահների տնտեսություններում սեփական գործածության համար ֆուսցող բրդի քանակութունը պակասեցնել և հետևապես ավելացնել պետությանը հանձնվելիք բրդի քանակութունը (ապրանքային ավելցուկը): Այդ ապրանքներն առաջին հերթին կտրվեն չքավոր ու միջակ այն վոչխարապահներին, վորոնք կհանձնեն վոչ թե միայն իրենց ու-

նեցած բրդի ապրանքային ավելցուկը, այլ դրանց կալեկացնեն նաև այն բուրդը, վոր պահում են սեփական տնտեսութեան մեջ տնայնագործութեան համար: Այս ապրանքները յենթադրում են տալ բրդի մթերման ժամանակ նրա արժեքի 30 տոկոսի չափով:

Կան ռայոններ, վորտեղ բրդի ապրանքային մասը քիչ է, և շատ անգամ անհատական տնտեսութեանները հանձնած բրդի արժեքը շատ պակաս է լինում վերոհիշյալ ապրանքների արժեքից: Այդ պատճառով անհրաժեշտ է լայն չափով գործադրել բրդի խմբովին հանձնումը: Խմբով հանձնելն այն առավելութեան ունի, վոր հանձնված բրդի փոխարեն ըստացված շինելները և մյուս ապրանքները կարող են խմբերում մասնակցող տնտեսութեանների միջև բաժանվել հերթով, նայած, թե ով ավելի կարիք է զգում այս կամ այն ապրանքի: Որինակ, յեթե դարնան բրդի հանձնելու ժամանակ տնտեսութեանների մի մասը կստանա ապրանքների մի տեսակը (շինելներ, բրեզենտներ, թուկ), իսկ մյուս մասը՝ յերկրորդ տեսակը (մեշուկացու կտոր, թաղիքներ և այլն), աշնան բուրդը հանձնելու ժամանակ ապրանքների բաժանման կարգը պետք է կատարվի հակառակ կարգով, այսինքն խմբի առաջին մասը կստանա մեշուկացու կտոր, թաղիքներ և այլն, իսկ մյուս մասը՝ շինելներ, բրեզենտներ և թուկ:

Յ Ե Ջ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Այս է ահա խորհրդային կոնտրակտացիայի համառոտ նկարագիրը: Բոլոր ասածներից յերևում է, վոր կոնտրակտացիան չքավոր ու միջակ տնտեսու-

թյունների բարձրացման, ամրապնդման, կոոպերացման և կոլեկտիվացման մի ուժեղ միջոց է:

Կոնտրակտացիան կոոպերացման և կոլեկտիվացման հետ կապվում է ամենասերտ կապով այն պատճառով, վոր կատարյալ և արագընթաց ոգնութեան հասցնել գյուղացիութեանը կարող է միայն կոլեկտիվացումը: Գյուղատնտեսական կոոպերացիան, առանց արտադրական կոոպերատիվներ և կոլխոզներ կազմակերպելու, անկարող կլիներ չքավոր ու միջակ տնտեսութեաններին այն ահաբեկ արտադրական և դրամական ոգնութեանը հասցնելու, վոր այնքան անհրաժեշտ է այդ տնտեսութեաններին:

Առանց արտադրական կոոպերացման և կոլեկտիվացման, անկարելի յե իրագործել գյուղատնտեսութեան այն ամենաուժեղ վերելքը, նրա արտադրութեան և ապրանքատվութեան ավելացումը, վոր այնքան անհրաժեշտ է սոցիալիստական արդյունաբերութեան կառուցող մեր յերկրին:

Միայն ժասսայական կոոպերացման և համատարած կոլեկտիվացման հետ ձեռք-ձեռքի տված կարող է կոնտրակտացիան ապահովել լիովին այն խողով ոգուտները, վորոնց մասին ասված է վերևում:

ՀՀ Ազգային գրադարան



NL0238211

54 845

484

201

907

1
1